ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

№ 5/17-251
26.07.2024թ.

«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի
/գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Ներսիսյան 7,
Պետական գրանցման համար՝ 222.120.00271,
գրանցված՝ 19.03.2004թ., ՀՎՀՀ՝ 01002597/
Տնօրեն Հովիկ Բալյանից

«Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի Տնօրեն Լ. Կիրակոսյանին
/Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դեղատան փողոց, 10շ., բն. 6,
ՀՎՀՀ՝ 02890282/

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

Հարգելի Պարոն Կիրակոսյան,

«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ՝ նաև Պատվիրատու/ և «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ նաև Կատարող/ միջև 26.04.2024թ. կնքվել է N «ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/11» Ապրանքի մատակարարման պայմանագիրը /այսուհետ՝ նաև Պայմանագիր/:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տերխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:*

Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ *այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (**տեղեկություններ և տվյալներ**), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում*

Հր.Ներսիսյան 7 Հեռ. (010) 20-70-07
Պ. Սևակ 5 Հեռ. (010) 28-85-50 info@yerevanmc.am

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:.

«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի 2.3. կետի համաձայն՝ *Մասնակիցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:*

Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին), բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

ՀՀ Պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության պետի 04.07.2024թ. թիվ Ե/1620-24 գրության համաձայն՝ *Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Լևոն Ստեփանի Կիրակոսյանը (2):*

Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ «Մաան» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 02869057) 2023 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Ուշագրավ է այն, որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Լևոն Ստեփանի Կիրակոսյանի և «Մաան» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Լևոն Ստեփանի Կիրակոսյանը 2022 թվականի հուլիսի 8-ից հանդիսանում է «Մաան» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն:***

«Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է դիմում հայտարարություն, որով հավաստել է, որ Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԵՐԳԿ-ԳՀԱՊՁԲ 24/11» ծածկագրով Գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «Մ. և Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝*

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված է.

4) որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միության անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն կետով նախատեսված պայմանը չի գործում միջազգային պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին կատարվելիք գնման գործընթացների նկատմամբ.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել՝ հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի թիվ 526-Ն որման (Այսուհետ նաև՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ *Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:*

Կարգի 119-րդ կետի համաձայն՝ *119. Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝*

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերության համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ 1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ 8) այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավասու մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը.*

Մատնանշված փաստերը վերլուծելու արդյունքում կարող ենք արձանագրել, որ «ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/11» գնման ընթացակարգի շրջանակներով հրապարակված՝ «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերով սահմանվել են մասնակիցների գնման ընթակարգին մասնակցելու իրավունքի չափանիշները:

Ըստ այդմ հրավերով նախատեսվել է սահմանափակում այն մասնակիցների համար, որոնց հետ փոխկապակցված անձինք ներառված են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում:

Ընդ որում գնման ընթակարգի .մասնակիցների վրա դրվել է պարտականություն ներկայացնել հավաստում հրավերով սահմանված, գնումների ընթացկարգին մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

Արդյունքում «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է դիմում-հայտարարություն, որով Ընկերությունը հավաստել է, որ «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԵՐԳԿ-ԳՀԱՊՁԲ 24/11» ծածկագրով Գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «Մ. և Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում

Այնինչ ՀՀ Պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության պետի 04.07.2024թ. թիվ Ե/1620-24 գրությունից պարզ է դարձել, որ «Մաան» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 02869057) 2023 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որի 100% բաժնեմասի սեփականտերը և տնօրենը հանդիսանում է Լևոն Ստեփանի Կիրակոսյանը, որը միաժամանակ հանդիսանում է «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականտեր և տնօրեն:

Ստացվում է, որ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Մաան» ՍՊ ընկերությունը և «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊ ընկերությունը փոխկապակցված են, ուստի «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊ ընկերության մասնակցությունը սահմանափակված է եղել գնումների գործընթացին:

Արդյունքում կարող ենք փաստել, որ «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊ ընկերությունը գնման ընթացակարգի շրջանակներում, մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ տեղեկություններ, մասնավորապես՝ «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակիցների գնման ընթակարգին մասնակցելու իրավունքի չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար, մասնավորապես՝ «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊ ընկերության հայտը կմերժվեր:

Ամբողջացնելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ առկա է 26.04.2024թ. N «ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/11» Ապրանքի մատակարարման պայմանագիրը, նույն պայմանագրի 8.3 կետով միակողմանի լուծելու հիմքը:

Ողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ .«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է N «ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/11» Ապրանքի մատակարարման պայմանագիրը:

«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ ՀԲԱԼՅԱՆ